ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՉՈՐՍ ՓԱՍՏԱԲԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՖՐԱՆՍԻԱՅԻ «HEDAC» ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ

13.07.2022 15:22

Հարգելի փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատի
և Ֆրանսիայի Օ դը Սենի փաստաբանների միության
միջև առկա համագործակցության շրջանակներում
Հայաստանից մինչև չորս փաստաբան
հնարավորություն կունենա
մասնակցել HEDAC ամառային դպրոցի կողմից
կազմակերպված վերապատրաստման
դասընթացներին, որոնք տեղի են ունենալու այս
տարվա օգոստոսի 24-ին, 25-ին, 26-ին, 29-ին և 30-ին:

Դասընթացներին մասնակցելու համար կարող են
դիմել ֆրանսախոս փաստաբանները:

Բնակվելու և ճանապարհի բոլոր ծախսերը պետք է
հոգա անձամբ մասնակից փաստաբանը,
Ֆրանսիայի Օ դը Սենի փաստաբանների միությունը
ստանձնում է ամառային դպրոցի գրանցման
վճարները: Դասընթացների մասին մանրամասն
տեղեկատվություն կարող եք ձեռք բերել այցելելով
հետևյալ հղումով. https://www.hedac.fr/ue2022:

Նշենք նաև, որ առաջին դիմողների թվում լինելը
կդիտվի առավելություն:

Մասնակցության համար հայտերը անհրաժեշտ է
ներկայացնել **մինչև 2022 թվականի հուլիսի 14- ը**
ներառյալ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })